



Հաստատված է Շուշիի տեխնոլոգիական համալսարանի  
Հոգաբարձուների խորհրդի 2018թ. դեկտեմբերի 27-ի  
N 1.1 որոշմամբ, արձանագրություն 8

**Ռեկտոր Հովհաննես Թորմաջյանի  
Հաշվետվությունը “Շուշիի տեխնոլոգիական համալսարան”  
հիմնադրամի 2018 թ. տարվա գործունեության արդյունքների մասին**

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) հիմնական ցուցանիշները հաշվետու ժամանակահատվածում.

Համալսարանի 2018թ. նախահաշիվը կազմել է 892299,9 մլն դրամ՝ 2016թ.-ի համեմատ (704459,9 մլն դրամ) 4,7 անգամ ավելի, 2017թ. համեմատ (332995,0 մլն դրամ) 1,6 անգամ ավելի: Ոչ բյուջետային մուտքերը 2016թ. համեմատ աճել են 5,8 անգամ 42,8 մլն դրամից, իսկ 2017թ. համեմատ աճել են 2,3 անգամ 106,9 մլն դրամից, հասնելով 251,5 մլն դրամ:

Սովորողների թվաքանակը՝

2018թ. դեկտեմբերի 15-ի դրությամբ՝ 1414  
այդ թվում՝

բակալավրիատ առկա՝ 342

բակալավրիատ հեռակա՝ 648

մագիստրատուրա՝ 99

միջին մասնագիտական՝ 325

2017թ. դեկտեմբերի 15-ի դրությամբ՝ 1425

այդ թվում՝

բակալավրիատ առկա՝ 423

բակալավրիատ հեռակա՝ 621

մագիստրատուրա՝ 89

միջին մասնագիտական՝ 292

2016թ. դեկտեմբերի 15-ի դրությամբ՝ 420

այդ թվում՝

բակալավրիատ առկա՝ 105

բակալավրիատ հեռակա՝ 168

մագիստրատուրա՝ 59

միջին մասնագիտական՝ 88

2018/2019 ուսումնական տարում Համալսարանը, ըստ նախնական տվյալների, կթողարկի 345 շրջանավարտ՝ 105-ը բակալավրիատ, 44՝ մագիստրանտ, միջին մասնագիտական կրթությամբ՝ 106:

Համալսարանում տպագրվում է անգլալեզու գիտական հանդես՝ Bulletin Of High Technology:

Համալսարանը հրատարակել է 24 ուսումնական ձեռնարկ և գրքեր, ստացել է գյուտի և օգտակար մոդելի թվով 11 արտոնագիր:

"CONSTRUCTIONS OF OPTIMIZED ENERGY POTENTIAL - MATERIALS AND ENERGY SAVING TECHNOLOGIES" XV միջազգային գիտաժողովի (Չեստոխովա, Լեհաստան) կազմկոմիտեի կազմում էր համալսարանի ռեկտոր Հովհաննես Թոքմաջյանը:

2018թ. դեկտեմբերի 5-7-ը համալսարանի ուսանողներ Սերգեյ Մելքումյանն ու Օնիկ Իսրայելյանը զեկուցումով հանդես են եկել "CONSTRUCTIONS OF OPTIMIZED ENERGY POTENTIAL - MATERIALS AND ENERGY SAVING TECHNOLOGIES" XV միջազգային գիտաժողովում (Չեստոխովա, Լեհաստան), որը կազմկոմիտեի որոշմամբ, ուսանողական աշխատանքների մեջ ճանաչվել է լավագույնը:

"CONSTRUCTIONS OF OPTIMIZED ENERGY POTENTIAL - MATERIALS AND ENERGY SAVING TECHNOLOGIES" XV միջազգային գիտաժողովում (Չեստոխովա, Լեհաստան) զեկուցումներով հանդես են եկել համալսարանի ներկայացուցիչներ, տեխնիկական գիտությունների դոկտոր Ալբերտ Մարգարյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր Վաչե Թոքմաջյանը, հետբուհական կրթական համակարգում ուսումնառողներ՝ Վրեժ Հայրապետյանն ու Հարություն Բայունցը:

Համալսարանը երկուական զեկուցումներով ներկայացած է եղել նաև հետևյալ գիտաժողովներում.

- "DEBRIS FLOWS: DISASTERS, RISK, FORECAST, PROTECTION" V միջազգային գիտաժողովում (1-5 հոկտեմբերի 2018թ., Թբիլիսի, Վրաստան),
- "MODERN PROBLEMS OF WATER MANAGEMENT, ENVIRONMENTAL PROTECTION, ARCHITECTURE AND CONSTRUCTION" VIII միջազգային գիտաժողովում (1-5 նոյեմբերի 2018թ., Թբիլիսի, Վրաստան):

Հաշվետու ժամանակահատվածում ժամկետային զինծառայության են մեկնել բակալավրիատի առկա ուսուցման համակարգից՝ 50 ուսանող, իսկ հեռակա ուսուցման համակարգից՝ 69 ուսանող:

2017/2018 ուստարվա առաջադիմության արդյունքներով շրջափոխման են ենթարկվել 36 ուսանող:

2018/2019 ուստարվա 1-ին կիսամյակի համար ուսման վճարի զեղչ է կատարվել 32 ուսանողների համար, հաշվի առնելով նրանց բարձր առաջադիմությունը և սոցիալական պայմանները:

2018թ. հետբուհական ուսուցման համակարգում ընդունվել են 6 հայցորդ: 2018թ. դեկտեմբերի 15-ի դրությամբ համալսարանում ուսումնառում է 30 հայցորդ:

2018/2019 ուսումնական տարում համալսարանի սոցխմբում ընդգրկվել է 10 ուսանող:

2018/2019 սպաների զավակների ցուցակում ընդգրկված է 39 ուսանող:

2018թ. Համալսարանի երևանյան ներկայացչությունում ուսումնական և լաբորատոր-գործնական պարապմունքներ են անցել 'Համալսարանի 113 ուսանող, ուսանող x օր x ժամ 4520 ցուցանիշով:

Ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու, թողարկվող շրջանավարտների գիտելիքներն ու հմտությունները աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով համալսարանը 2018թ. կատարել է աշխատանքներ, նյութատեխնիկական բազաների ստեղծման ուղղությամբ: Չունենալով բավարար քանակի հողատարածություններ և գյուղտեխնիկա, վարձակալվել է 12,5 հա վարելահող Արցախի հանրապետության տարբեր բնակլիմայական գոտիներում, որտեղ փորձարկվել են հայկական սելեկցիայի՝ պոմիդորի 6, տաքդեղի 4 և սմբուկի 1 սորտ:

Հանրապետությունում առաջին անգամ փորձարկվել է արժեքավոր յուղատու բոյս համարվող գետնանուշի վերամշակման նոր տեխնոլոգիաների ստացման աշխատանքներ:

Ստեփանակերտի Աջափնյակ թաղամասի ուսումնափորձնական այգում ուսանողների գործուն մասնակցությամբ կազմակերպվել է պտղատու այգիների համալրման, էտի, բոյսերի հիվանդությունների և վնասատուների դեմ տարվող պայքարի աշխատանքներ: Սկսվել են կաթիլային ոռոգման ուսումնափորձարարական

համակարգի ներդրման աշխատանքները: Համալսարանի Երևանյան ներկայացուցչությունում կազմավորվում է կաթիլային ոռոգման համակարգի ուսումնական լաբորատորիա:

Ներկայումս աշխատանքներ են տարվում Սարուշենի տոհմային կայանում ուսումնափորձարարական բազա ստեղծելու ուղղությամբ:

SS, հրատարակչության և լրատվության բաժնի կողմից 2018թ, կատարվել են հետևյալ աշխատանքները՝ համալսարանին անհրաժեշտ որոշակի տեխնիկայի ձեռքբերում՝ հսկողական տեսախցիկ 56 հատ, տեսաձայնագրիչ 3 հատ, պրոյեկտոր 1 հատ, համակարգիչ (կոմպլեկտ) 14 հատ, ցանցային բաժանարար 30 հատ, սնուցման աղբյուր 3 հատ, տպիչ 6 հատ, սքաներ 1 հատ, կոշտ սկավառակ 7 հատ, արտաքին կոշտ սկավառակ 2 հատ, քարթրիջ 30 հատ, նոութբուք 1 հատ, անխափան սնուցման սարքի մարտկոց 1 հատ (տվյալները մանրամասն բերված են աղյուսակներում), համակարգչային սարքավորումների տեխնիկական սպասարկում և ծրագրային ապահովում, համակարգչային լսարանների տեխնիկական-ծրագրային համակարգերի անխափան աշխատանքի կազմակերպում և շահագործում, պատճենահանող-բազմացնող սարքերի անխափան աշխատանքի կազմակերպում, համակարգչային տեխնիկայի վերանորոգում, ստորաբաժանումների ինտերնետ կապի ապահովում, անվտանգության տեսախցիկների տեղադրում 50 հատ, ներքին հեռախոսների տեղադրում՝ 8 հատ :

Իրականացվել է համալսարանի միջոցառումների իրականացման տեխնիկական ապահովման, լուսաբանման աշխատանքներ:

Համալսարանի ուսանողների հետ հեռավար դասախոսություններ է իրականացվել Երևանից: Իրականացվել է համալսարանի միջոցառումների իրականացման տեխնիկական ապահովման, լուսաբանման աշխատանքներ:

<http://shushitech.am/> կայքում 2018թ. Դեկտեմբերի 15-ի դրությամբ իրականացվել է 396 նյութերի հրատարակում: Հաշվետու տարում անցկացվող բոլոր միջոցառումները լուսաբանվել և տեղադրվել են կայքէջի Գլխավոր էջում: Տեղադրված նյութերը թարգմանվել են ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն: Իրականացվել է դասախոսների համակարգչային ուսուցման աշխատանքներ:

2018թ. Շահագործված տեխնիկայի ցանկը բերված է հավելված 1.2-ում:

Գրադարանը սպասարկում է 175 դասախոսի ու աշխատողի և 1200 առկա ու հեռակա համակարգերում սովորողների:

Գրադարանը իրականացնում է բոլոր ընթերցողների՝ ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի, աշխատողների, մագիստրանտների և ասպիրանտների պահանջները գրքերով, պարբերականներով, ամսագրերով և այլ անհրաժեշտ գրականությամբ, որոնք առկա են գրադարանի գրքային ֆոնդում:

Նոր ստացված գրքերի մասին ժամանակին տեղեկացվում է ամբիոններին: Գրադարանը կատարում է գրքերի համալրում, մշակում, գրացուցակավորում, հաշվառում և բաշխում, սպասարկում և գրականության ապահովում:

Համալսարանի գրքային ֆոնդը կազմում է 31050 կտոր գիրք: Դրանցից 13042-ը՝ հայերեն է, 17395-ը՝ ռուսերեն, 613-ը՝ այլ օտար լեզուներով:

Համալսարանում կազմակերպվել են մրցույթներ և պարզեցված ընթացակարգեր համալսարանի համար համակարգչային տեխնիկայի, տնտեսական և գրասենյակային ապրանքների, կենցաղային տեխնիկայի, լաբորատոր սարքավորումների, գյուղմթերքների և սննդամթերքի ձեռք բերման համար, որոնց ցանկը բերված է հավելված 1,3-ում:

Համալսարանի ուսանողների ու պրոֆեսորա-դասախոսական կազմի հետ տարբեր համալսարանների և կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպվել են հետևյալ հանդիպումները:

1. ԵրՊՀ-ի տնտեսագիտական ֆակուլտետի ֆինանսահաշվային ամբիոնի դասախոս, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, դոցենտ Բագրատ Ասատրյանը, ԵրՊՀ-ի Արևելագիտության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանը և Շուշիի «Ավան Պլազա» հյուրանոցի գործադիր տնօրեն Սարգիս Գալստյանը: Ռեկտոր Հովհաննես Թոքմաջյանը ողջունելով նրանց այցը համալսարան՝ հյուրերին է ծանոթացրել բուհում գործող հետազոտական և ուսումնական լաբորատորիաների, ինչպես նաև համալսարանում իրականացվող պահածոյացման աշխատանքներին: Պայմանավորվածություն ձեռք բերվեց համագործակցել համալսարանի հետ, աջակցել ու կազմակերպել բուհում դասախոսություններ:
2. Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ Գագիկ Մակարյանը: Նա հանդես է եկել երիտասարդության զբաղվածության, մոտիվացիայի, աշխատաշուկայի պահանջարկի թեմաների վերաբերյալ դասախոսությամբ:
3. Մոսկվայի կապի և ինֆորմատիկայի տեխնիկական համալսարանի ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արևշատ Վարդանյանը: Նախքան դասախոսությանն անցնելը պրոֆեսորն իր խոսքում կարևորել է Շուշիի

տեխնոլոգիական համալսարանի դերն Արցախի կրթության համակարգի հետագա զարգացման գործում, որից հետո Ա. Վարդանյանը հանդես է եկել «Հիդրագել կավելաստի կիրառումը բուսաբուծության ասպարեզում» թեմայով դասախոսությամբ: Ա. Վարդանյանը համալսարանի գրադարանին է նվիրել իր հեղինակած 20 անուն գրքեր:

4. «Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամի Հավաքագրման և ընտրության տնօրեն Դավիթ Համբարյանը, տարածաշրջանային տնօրեն Արմեն Հովհաննիսյանը, Առաջնորդության զարգացման ղեկավար Մարիամ Թորոսյանը:

Հիմնադրամի հավաքագրման և ընտրության տնօրեն Դավիթ Համբարյանը ողջունելով ներկաներին, նշեց, որ «Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամը հիմնադրվել է 2013 թվականին ու արդեն 2015 թվականից սկսել է մասնակիցների առաջին հավաքագրումը և այս տարի հավաքագրում են արդեն 4-րդ սերնդի մասնակիցներին:

Այն ուսանողներն, ովքեր ցանկություն ունեն մասնակցելու «Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագրին՝ Դ. Համբարյանը ծանոթացրեց դիմելու կարգին, նշելով, որ ծրագրին մասնակցելու համար հարկավոր է գրանցվել՝ լրացնելով առցանց հայտադիմումը:

5. Ս.թ. ապրիլի 4-5-ը Շուշիի տեխնոլոգիական համալսարանում տեղի ունեցավ Արցախյան շարժման 30 ամյակին նվիրված ուսանողական գիտաժողով՝ տեխնիկական, գյուղատնտեսական, տնտեսագիտական և հումանիտար գիտությունների ուղղություններով՝ երեք տասնյակից ավելի բակալավրի ուսանողների և մագիստրանտների մասնակցությամբ: Գիտաժողովին ներկա էին ԱՀ Կրթության, գիտության և սպորտի նախարարության, ԱՀ Գյուղնախարարության պաշտոնատար անձինք, համալսարանի ռեկտոր Հովհաննես Թոքմաջյանը, բուհի պատասխանատուներ, մի շարք պետական և մասնավոր կառույցների ներկայացուցիչներ:

6. Իրանի «Արմեն» ֆոնդի հայ բարերար Իվետա Դանիելյանը և «Թևանիկ» խմբի հայ բարերարներ: «Արմեն» հայկական բարեգործական ֆոնդը ստեղծվել է Իրանի հանրապետությունում 2017 թվականին և 2018-ից նախաձեռնել ու իրականացնում է «Լավագույն ուսանող» ծրագիրը, որի շրջանակներում այսօր

Ծրագրի շրջանակներում դրամական պարգևներ է հանձնվել համալսարանի բակալավրիատի ուսանողներ՝ Արամ Հովսեփյանին, Սամվել Աղավելյանին, Մարիամ Գևորգյանին, Արթուր Սարգսյանին, Գրիգորի Մանուչարյանին:

7. Ճարտարապետների և ճարտարագետների համահայկական ընկերակցության գործադիր տնօրեն Արփինե Դանիելյանը և նույն ընկերակցության համանախագահ Գոհար Թութունջյանը: Ճարտարապետների և ճարտարագետների համահայկական ընկերակցությունը ստեղծվել է 2009թ. ՀՀ Սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ: Ընկերակցությունն այսօր աշխարհի տարբեր երկրներում, այդ

թվում նաև Արցախում ունի ներկայացուցչություններ: Կապեր է հաստատել Սփյուռքի բոլոր մասնագիտական համայնքների և անհատ մասնագետների հետ՝ ստեղծելով մասնագիտական տվյալների բազա, որի միջոցով խթանում են նմանատիպ գործունեություն ծավալող անհատ մասնագետների և ընկերությունների համագործակցությունն ու համատեղ նախագծերի իրականացումը Հայաստանում, Սփյուռքում և Արցախում:

8. Բնապահպանության և կլիմայի փոփոխության մասնագետ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, Երևանի «Իսազեր» էկոլոգամշակութային հասարակական կազմակերպության գիտության գծով փորձագետ Արամ Գաբրիելյանը: Նա ճարտարապետաշինարարական ֆակուլտետի ուսանողների համար ներկայացրել է «Կլիմայի փոփոխության հիմնախնդրի լուծմանը Արցախի մասնակցության հնարավոր ուղիները» թեմայով դասախոսություն:

Միավորված ազգերի կազմակերպության կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի մասին խոսելով՝ բանախոսը նշեց, որ նպատակն է ջերմոցային գազերի կոնցետրացիան մթնոլորտում կայունացնել այնպիսի մակարդակով, որով կկանխվի վտանգավոր մարդածին ազդեցությունը կլիմայական համակարգի վրա:

9. ԱՀ պետնախարար Արայիկ Հարությունյանը: Նա հանդիպել է ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ: Ողջունելով բուհի ուսանողներին և համալսարանի ներկայացուցիչներին՝ ԱՀ պետնախարար Ա. Հարությունյանը շնորհավորել է ԱՀ Պաշտպանության բանակի օրվա, Շուշիի ազատագրման 26-րդ և Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 73-րդ տարեդարձերի կապակցությամբ: Ուսանողներին ուղղված խոսքում պետնախարարն անդրադարձավ Մայիսյան Եռատոնի խորհրդին՝ խոսելով Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի, Շուշիի ազատագրման և Պաշտպանության բանակի օրվա առանձնահատուկ նշանակության մասին՝ ընդգծեց, որ հաղթանակների արժևորման ամենալավ եղանակը մեր իսկ պարտականությունների լիարժեք կատարումն է: Պետնախարարը ժամանակակից հասարակության ձևավորման հարցում կարևորեց աշխարհն ամբողջականորեն ճանաչելու կարողությունը: Ա. Հարությունյանն անդրադառնալով ուսանողների ստացած կրթության որակին, կարևորել է գործնական պարապմունքների ավելի հաճախակի կազմակերպումը: Հանդիպման ընթացքում տեղի ունեցավ պետնախարարի և ուսանողների հարցուպատասխանը, որի ընթացքում արձարծվեցին ուսանողությանը հետաքրքրող մի շարք հարցեր:

10. Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայկ Սարգսյանը և նույն համալսարանի մագիստրոսական ծրագրերի ղեկավար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Մարկոսյանը: Նրանք բուհի ուսանողների համար անց են կացրել դասախոսություն՝ արդի տնտեսագիտության հիմնախնդիրների վերաբերյալ: Դասախոսության ընթացքում պրոֆեսորները հանդես

են եկել տնտեսական ոլորտին վերաբերող մի շարք հարցերի շուրջ, անդրադարձել այն խնդիրներին, որոնք խոչընդոտում են տնտեսական աճի զարգացմանը, թեմային առնչվող համեմատականներ անցկացրել այլ երկրների հետ, մատնանշել ոլորտում առկա խնդիրների լուծման ուղիներ, և կարևորել կրթության և գիտության դերը ցանկացած բնագավառում՝ որպես բարեկեցության խթան:

Նույն օրը ուսանողների համար համալսարանում տեղի է ունեցել նաև բանավեճ՝ «IV-րդ արդյունաբերական հեղափոխությունը և երկու հայկական պետությունների տնտեսության խնդիրները» թեմայով՝ ԱՀ Ազգային վիճակագրական ծառայության նախագահ, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, դոցենտ, Շուշիի տեխնոլոգիական համալսարանի դասախոս Կարեն Ներսիսյանի, պրոֆեսորներ Հայկ Սարգսյանի և Աշոտ Մարկոսյանի վարմամբ: Բանավեճի ընթացքում բանախոսները խոսել են երկու հայկական պետություններում արձանագրված զարգացումների ու աճի, ինչպես նաև մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրների և արդյունաբերական հեղափոխության մասին, և նշել, որ տնտեսության զարգացման համար առաջնահերթ պետք է վարել խելամիտ քաղաքականություն: Բանավեճն անցավ հարց ու պատասխանով, եղան քննարկումներ, հնչեցին թեմային վերաբերող տարբեր տեսակետներ:

11. Գյուղատնտեսության նախարար Ժիրայր Միրզոյանը: Նա հանդիպումներ է ունեցել Շուշիի տեխնոլոգիական համալսարանի՝ Գյուղատնտեսության նախարարությունում ուսումնական պրակտիկա անցնող գյուղատնտեսական ֆակուլտետի ուսանողների հետ:

Ողջունելով ուսանողներին՝ Ժիրայր Միրզոյանն ընդգծել է նրանց ընտրած մասնագիտությունների կարևորությունը մեր երկրի տնտեսության զարգացման ու բարգավաճման գործում: Նախարարն ուսանողներին վստահեցրել է, որ երիտասարդների նորարար գաղափարները պրակտիկ գիտելիքների հետ համադրելով մեծ փոփոխությունների արդյունք կարող են դառնալ:

12. Սույն թվականի հունիսի 4-ին Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռեկտոր Հ. Թոքմաջյանը, պրոռեկտոր Ս. Գալստյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Մհեր Մարկոսյանը, մրգի չորացման պահարաններ արտադրող, գյուտարար Վ. Գալստյանը Արցախի Գյուղատնտեսության նախարարի հանձնարարությամբ այցելեցին Մարտակերտ քաղաքում գտնվող «Մարտակերտի բարիքներ» ՍՊԸ, որտեղ հանդիպում ունեցան ՍՊԸ հիմնադիրներ՝ Գրիգորի Միրզոյանի և Ալեքսեյ Բալայանի հետ:

Հյուրերը տեղում ծանոթացան արևային չորացմամբ դասական չորանոցի և Իրանի Հանրապետությունից ներմուծված էլեկտրականությամբ և գազով աշխատող չորացման պահարաններին: Լսեցին և քննարկեցին «Մարտակերտի բարիքներ» ՍՊԸ հիմնադիր Գ. Միրզոյանի առաջարկությունները: Պրոֆեսոր Մ. Մարկոսյանն առաջարկ ներկայացրեց մրգերի չորացման գործընթացի ավտոմատացման վերաբերյալ, ինչը ողջունվեց գործարարի կողմից:



13. Իրանի Հանրապետության «Արմեն» հայկական բարեգործական ֆոնդի ղեկավար կազմի ներկայացուցիչներ, Իրանի «Թևանիկ» խմբի ղեկավար Իվետա Դանիելյանը, ԱՀ ԱԺ պատգամավոր Ռիտա Մնացականյանը: Ֆոնդի կողմից համալսարանին է նվիրվել թվով 5 համակարգիչ, որը նախատեսված է 3D մոդելավորման համար: Համալսարանն առաջիկայում կհամալրվի ևս մեկ համակարգչային լսարանով, որտեղ կտեղադրվեն նվիրված համակարգիչները:

Բարեգործական ֆոնդի անդամներն իրենց խոսքում կարևորեցին ժամանակակից տեխնոլոգիայի դերն ուսանողների որակյալ կրթության ապահովման հարցում: «Արմեն» հայկական բարեգործական ֆոնդի ղեկավար կազմի ներկայացուցիչները նշեցին, որ համալսարանը մշտապես կլինի նրանց ուշադրության առանցքում՝ ընդգծելով, որ համագործակցությունը Շուշիի տեխնոլոգիական համալսարանի հետ կունենա շարունակական բնույթ:

14. Հասարակական և քաղաքական գործիչ Անահիտ Բախշյանը: Նա այցելել է Շուշիի Կերպարվեստի պետական թանգարան և Շուշիի տեխնոլոգիական համալսարան: Նա թանգարանին է նվիրել Վախթանգ Սիրունյանի հեղինակած «Լիլիթ» դիմանկարը:

15. Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ալբերտ Մարգարյանն: Նա բուհի դասախոսների համար հանդես է եկել «Հեղուկի անընդհատության խզումով ուղեկցվող հիդրավլիկական հարված», «Պոմպային կայանների շահագործման խնդրի մասին» և «Աերացված հոսանքի արտանետումը ճնշման խողովակաշարի ծայրից» թեմաներով դասախոսությամբ:

Բանախոսը ներկայացնելով դասախոսության թեմաները՝ խոսեց երկար խողովակաշարերի համար հիդրավլիկական հարվածի առավել վտանգավոր լինելու մասին՝ ընդգծելով, որ ճնշման մեծ բարձրացումներից խուսափելու համար անհրաժեշտ է դրոսելացում իրականացնող սարքերի փակման ժամանակամիջոցը երկարաձգել:

16. Արցախի անկախության 27-ամյակի, ուսումնական նոր տարվա և գիտելիքի օվա կապակցությամբ սեպտեմբերի 3-ին համալսարան է այցելել ԱՀ Նախագահի խորհրդական, Շուշիի տեխնոլոգիական համալսարանի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արայիկ Հարությունյանը և դասախոսություն կարդացել ուսանողների համար:

Ա. Հարությունյանը խոսել է Արցախյան շարժման կարևորության մասին և անդրադարձել թե՛ կրթական և թե՛ այլ ոլորտներում երկրում եղած ու կատարվելիք բարեփոխումների մասին, ընդգծել, որ պետք է գնահատել ձեռք բերվածը, որն բավականին մեծ է: Որպես ՇՏՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ իր տեսակետն է արտահայտել առաջիկա խնդիրների վերաբերյալ: Երկրի զարգացման համար առաջնայինը կրթությանն ու գիտությանն է: Պետք է հայտնաբերել բոլոր տաղանդավոր անհատներին և աշխատել նրանց հետ: Պետք է մտածել որակ ապահովելու մասին, այլ ոչ քանակի, մեկ ուսանող ունեցող խումբը պետք է պահել և աշխատել նրա հետ: Արցախը մեծ ներուժ ունի զարգանալու ցանկացած ոլորտում,

ուղղակի նվիրված աշխատանք է պետք,- ասաց Ա. Հարությունյանը: Այնուհետև Ա. Հարությունյանը պատասխանել է ուսանողների ու դասախոսների հարցերին, պատրաստակամություն հայտնել աջակցել բարձրացված հարցերի լուծմանը:

17. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման նախապարաստական աշխատանքներին մասնակցելու նպատակով սեպտեմբերի 26-27-ը բուհ է այցելել ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի» ներկայացուցիչ Անուշավան Մակարյանը:

Մասնագիտությամբ ֆիզիկոս, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Մակարյանը ղեկավարում է Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժինը, որը կազմակերպում է Հայաստանի տարածքում գործող ուսումնական հաստատությունների հավատարմագրումը:

Ա. Մակարյանի մասնակցությամբ կայացավ հանդիպումներ համալսարանի ուսանողների, դասախոսների, ամբիոնի վարիչների և ստորաբաժանումների ղեկավարների հետ: Հանդիպման շրջանակներում տեղի ունեցան բազմաթիվ քննարկումներ՝ նվիրված ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի կազմակերպման առանձնահատկություններին:

18. «Arm Sec» հիմնադրամի տնօրեն, տեղեկատվական անվտանգության փորձագետ, Երևանի պետական համալսարանի դասախոս Սամվել Մարտիրոսյանը: Նա դասախոսությամբ հանդես եկել համալսարանի ուսանողների համար:

Բանախոսը մասնավորապես խոսել է մի շարք կայքահենային (հաքերային) խմբավորումների հարձակումների մասին, ինչպես Հայաստանի և Արցախի, այնպես էլ տարբեր պետությունների նախարարությունների և գերատեսչությունների պաշտոնական կայքերի դեմ և բերել բազմաթիվ օրինակներ:

Սամվել Մարտիրոսյանն ընդգծել է, որ պետք է զգուշություն ցուցաբերել համացանցից օգտվելիս, և չընկնել կայքահենների ծուղակը, քանի որ դա նաև ազգային անվտանգության հարց է:

Դասախոսության ընթացքում Սամվել Մարտիրոսյանն ուսանողներին է ներկայացրել համացանցի արդյունավետ կիրառման հնարավորությունները, այն համակազգային ծրագրերը, որոնք առավել անվտանգ են ու պաշտպանունակ կայքահենային հարձակումներից: Բանախոսը պատասխանել է ուսանողներին հուզող հարցերին:

19. ԱՀ պետնախարար Գրիգորի Մարտիրոսյանը: Նա բարձր է գնահատել բուհում իրականացվող ծրագրերը և գոհունակություն հայտնել, որ Շուշին այսօր ունի նման համալսարան:

Հանդիպմանը մասնակցել են Շուշիի վարչակազմի ղեկավար Վլադիմիր Կասյանը, համալսարանի պրոռեկտորները, պաշտոնական այլ անձինք:

20. Հոկտեմբերի 12-ին Շուշիի տեխնոլոգիական համալսարանում տեղի ունեցավ իրավաբանական գիտությունների դոկտոր, ՀՀ արդարադատության գեներալ-

լեյտենանտ Անատոլի Ավագյանի «Իմաստության ոսկե հանրագիտարան» գրքի շնորհանդեսը: Հյուրերի կազմում էին Գագիկ Մեհրաբյանը և Սերգեյ Հակոբյանը:

Համալսարանի նիստերի դահլիճում հյուրերը հանդիպում են ունեցել բուհի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետ: Բանախոսը հանդիպման մասնակիցներին ներկայացրեց իր հեղինակած աշխատանքը, իր անցած կյանքի ուղին ու գործունեությունը:

### **2018թ. ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվել է հետևյալ միջոցառումները.**

- 1 Հոկտեմբերի 10-ին համալսարանում կազմակերպվել է ինտելեկտուալ խաղ հինգ թիմերի մասնակցությամբ:
- 2 Հոկտեմբերի 19-ին տեղի ունեցավ Ուս. խորհրդի արտահերթ նիստ, որտեղ Ուսանողական խորհրդի նախագահ ընտրվեց ճարտարապետաշինարարական ֆակուլտետի «Էլեկտրաէներգետիկա» մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանող Արամ Հարությունյանը:
- 3 Նոյեմբերի 1-ին ՇՏՀ ուսանողների այցը Տիգրանակերտի պետական պատմամշակութային արգելոց՝ ծառերը նախապատրաստական աշխատանքներ կատարելու համար ձմռան սեզոնին:
- 4 Նոյեմբերի 14-ին ճան. այց Տաթևի վանք և Սյունիքի մարզի Խնձորեսկ գյուղ, ինչպես նաև այցելություն Մխիթար Սպարապետի գերեզման:
- 5 Սարսանգի ՀԷԿ-ի քառասուն ամյակին նվիրված միջոցառում ՇՏՀ մագիստրոսների մասնակցությամբ:
- 6 Նոյեմբերի 18-ին DigitechExpo-ին ՇՏՀ ուսանողների մասնակցություն:
- 7 Շուշիի Մշակույթի կենտրոնում կազմակերպված ինտելեկտուալ թիմային մասնակցություն:
- 9 Նոյեմբերի 17-ին Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարանում ցուցահանդես- վաճառք՝ ՇՏՀ-ի մասնակցությամբ:
- 10 Նոյեմբերի 17-ին Ուսանողական երեկոյի կամզակերպում դասախոսների և ուսանողների մասնակցությամբ
- 11 Նոյեմբերի 19-ին այցելություն Շուշիի մանկաապատանեկան և ստեղծագործական կենտրոն:
- 12 Նոյեմբերի 28-ին ՀՀ Կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում Գյուղատնտեսական ֆակուլտետի ուսանողները սեմինարի ձևաչափերով փորձուսուցում են անցել:
- 13 ՇՏՀ-ի ուսանողների տարբեր խմբերի պարբերաբար հանդիպումներ Շուշիի թանգարաններ:
- 14 ՄեՁՀԼ-ի կողմից ՇՏՀ-ի ուսանողներից մեկնել են ՀՀ-ում գործող 7 Սոցիալական ձեռնարկություններ և մասնակցել տարաբնույթ սեմինարների:

15 Դեկտեմբերի 6-ին կամզակերպվել է հանդիպում հոգևոր անվտանգության թեմայի շրջանակներում Արցախի թեմի լուսարարապետ Հրայր Սարկավազի հետ:

16 Դեկտեմբերի 7-ին կազմակերպվել է համալսարանում կլոր սեղան, ուսանողների հուզող հարցերը բարձրացման և լուծումներ առաջարկելու ողջությամբ:

17 Դեկտեմբերի 12-ին, հանդիպում նվիրված ԼՂ անկախության, Սահմանադրության և մարդու իրավունքների պաշտպանության օրվան:

18 Դեկտեմբերի 19-ին ուսանողները հանդիպել են ՏՏ ծրագրերի կենտրոն հիմնադրամի ղեկավար Աշոտ Ավանեսյանի հետ և քննարկվել են փոխհամագործակցության տարբերակներ:

Ձեռք է բերվել քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման գործունեության ՇԻ-1026 ըստ քաղաքաշինության բնակելի, հասարակական և արտադրական ոլորտի լիցենզիա:

Քաղաքաշինության բնագավառում պայմանագրային հիմունքներով իրականացվել են նախագծային և տեխնիկական հսկողության հետևյալ աշխատանքները.

1. Պայմանագրեր N ԱԿ/ՀՀ-Հ-01/18, ԱԿ/ՀՀ-Հ-02/18, ԱԿ/ՀՀ-Հ-03/18, ԱԿ/ՀՀ-Հ-04/18, ԱԿ/ՀՀ-Հ-05/18, ԱԿ/ՀՀ-Հ-06/18, ԱԿ/ՀՀ-Հ-07/18 <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի հետ, 08.01.2018թ. : Իրականացնել ԱԿ Ասկերանի շրջանի Աստղաշեն համայնքում, Մարտունու շրջանի Մարտունի քաղաքի Քաջավան 5 տեղամասում, Մարտունի քաղաքի Մուխանք-1 տեղամասում, Ճանշինի Խրամորդ և Խնապատ համայնքներում խորքային հորերի հորատում և նոր ոռոգման համակարգերի կառուցման շինարարական աշխատանքների իրականացման հեղինակային հսկողության ծառայությունների մատուցում:
2. Պայմանագրեր N ԱԿ/ՀՀ-Հ-12/18, ԱԿ/ՀՀ-Հ-13/18, ԱԿ/ՀՀ-Հ-14/18, ԱԿ/ՀՀ-Հ-15/18, ԱԿ/ՀՀ-Հ-16/18 <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի հետ, 07.05.2018թ.: Իրականացնել ԱԿ Մարտունու շրջանի Սպիտակաշեն և Վարանդա համայնքներում, Գիշի համայնքի Բաքա Հաչա տեղամասում, Գիշի համայնքի Դուզին տափ տեղամասում և Մարտունու շրջանի Հաղորտի համայնքում խորքային հորերի հորատում և նոր ոռոգման համակարգերի կառուցման շինարարական աշխատանքների իրականացման հեղինակային հսկողության ծառայությունների մատուցում:
3. Պայմանագրեր N ԱԿ/ՀՀ-Հ-08/18, ԱԿ/ՀՀ-Հ-09/18, ԱԿ/ՀՀ-Հ-10/18, ԱԿ/ՀՀ-Հ-11/18 <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի հետ, 01.03.2018թ. Իրականացնել ԱԿ Մարտունու շրջանի Մարտունի քաղաքի Հաղորտու ֆերմայի

տարածքում, քաղաքամերձ-1 տեղամասում, Արցախագահի մոտակայք տեղամասում և ԱՀ Ասկերանի շրջանի Հովսեփավան համայնքում խորքային հորերի հորատում և նոր ոռոգման համակարգերի կառուցման շինարարական աշխատանքների իրականացման հեղինակային հսկողության ծառայությունների մատուցում:

4. Պայմանագիր N 07, ԼՂՀ <<Տեխնո Վուդ>> ՍՊԸ-ի հետ, 01.11.2018թ., շոգու և տաք ջրի տեսքով ջերմային էներգիայի մատակարարման (առք ու վաճառքի):
5. Պայմանագիր N 03, ԱՀ <<Արմատներ>> ՍՊԸ-ի հետ, 02.07.2018թ., կոմպոտի հյութերի, մարինադների, կոնֆիտյուրների, մուրաբաների, բանջարեղենի, մսային և ձկնային պահածոների առք ու վաճառքի:
6. Պայմանագիր սարքավորումների առ ու վաճառքի ՀՀ <<Ինտերգետուէկ>> ՍՊԸ-ի հետ, 29.05.2018թ.
7. Պայմանագիր օբյեկտի վարձակալության N2, ԱԶ Զարինե Աբրահամյան 01.02.2018թ.
8. Պայմանագիր N 01/03-18-5, առ ու վաճառքի ԱԶ Ամալյա Խալաթյան Արմիկի, 20.03.2018թ.:

Կնքվել են ՇՏՀ-ի գործունեության և սպասարկման տարբեր ոլորտներին վերաբերվող քաղիրավական հետևյալ պայմանագրերը.

1. Քաղիրավական պայմանագիր N 04, 05.02.2018թ.: Համաձայն <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի 08.01.2018թ. N ԱՀ/ՀՀ-Հ-01/18, ԱՀ/ՀՀ-Հ-02/18, ԱՀ/ՀՀ-Հ-03/18, ԱՀ/ՀՀ-Հ-04/18, ԱՀ/ՀՀ-Հ-05/18, ԱՀ/ՀՀ-Հ-06/18, ԱՀ/ՀՀ-Հ-07/18 պայմանագրերի իրականացնել ԱՀ Ասկերանի շրջանի Աստղաշեն համայնքում, Մարտունու շրջանի Մարտունի քաղաքի Քաջավան 5 տեղամասում, Մարտունի քաղաքի Մուխանք-1 տեղամասում, Ճանշինի Խրամորդ և Խնապատ համայնքներում խորքային հորերի հորատում և նոր ոռոգման համակարգերի կառուցման շինարարական աշխատանքների իրականացման հեղինակային հսկողության ծառայությունների մատուցում:
2. Քաղիրավական պայմանագիր N 37: Համաձայն <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի 08.05.2018թ. N ԱՀ/ՀՀ-Հ-12/18, ԱՀ/ՀՀ-Հ-13/18, ԱՀ/ՀՀ-Հ-14/18, ԱՀ/ՀՀ-Հ-15/18, ԱՀ/ՀՀ-Հ-16/18 պայմանագրերի իրականացնել ԱՀ Մարտունու շրջանի Սպիտակաշեն և Վարանդա համայնքներում, Գիշի համայնքի Բաքա Հաչա տեղամասում, Գիշի համայնքի Դուզին տափ տեղամասում և Մարտունու շրջանի Հաղորտի համայնքում խորքային հորերի հորատում և նոր ոռոգման համակարգերի կառուցման շինարարական աշխատանքների իրականացման հեղինակային հսկողության ծառայությունների մատուցում:

3. Քաղիրավական պայմանագիր N 34: Համաձայն «Հայաստան» համահայկական հիմնադրամի 26.04.2018թ. N ԱՀ/ՀՀ-Հ-08/18, ԱՀ/ՀՀ-Հ-09/18, ԱՀ/ՀՀ-Հ-10/18, ԱՀ/ՀՀ-Հ-11/18, պայմանագրերի իրականացնել ԱՀ Մարտունու շրջանի Մարտունի քաղաքի Հաղորտու ֆերմայի տարածքում, քաղաքամերձ-1 տեղամասում, Արցախագազի մոտակայք տեղամասում և ԱՀ Ասկերանի շրջանի Հովսեփավան համայնքում խորքային հորերի հորատում և նոր ոռոգման համակարգերի կառուցման շինարարական աշխատանքների իրականացման հեղինակային հսկողության ծառայությունների մատուցում:
4. Քաղիրավական պայմանագիր N 02, 02.02.2018թ.: ԱՀ Ասկերանի շրջանի Սարուշեն համայնքի անասնապահական համալիրը շահագործման նախապատրաստելու նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում:
5. Քաղիրավական պայմանագիր N 01, 01.02.2018թ.: ԱՀ բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության 2017 թ-ի նոյեմբերի 11-ի N 15-5/4337 գրությամբ ներկայացվող խնդիրներին լուծում տալու համար:
6. Ի լրումն 25.12.2017թ. կնքված քաղիրավական N 85 պայմանագրի:  
ԱՀ Հաղորտի շրջանի Մեխակավան բնակավայրի գլխավոր հատակագծի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների:
7. Ի լրումն 16.09.2017թ. կնքված քաղիրավական N 59 պայմանագրի:  
ԱՀ Շուշի քաղաքի ջրամատակարարման համակարգի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների:
8. Ի լրումն 02.02.2018թ. կնքված քաղիրավական N 02 պայմանագրի:  
ԱՀ Ասկերանի շրջանի Սարուշեն համայնքի անասնապահական համալիրը շահագործման նախապատրաստելու համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների:

Հավելված 1.1

**Ձեռք բերված և ծախսված պարարտանյութերի ու թունաքիմիկատների քանակը 2018թ. Դեկտեմբերի 15-ի դրությամբ**

Պարարտանյութերի, թունաքիմիկատների անվանում	Ձեռք բերվել 2018թ, լ/կգ	2017թ.մնացորդ, լ/կգ	Ծախսվել է լ/կգ		Պահեստի մնացորդ լ/կգ
			2018թ. ձեռքբերածից	2017թ. մնացորդից	
Պարարտանյութեր, որից	600	1750	600	1750	
Ամոնյակային սելիտրա		750		750	
Կրկնակի սուլպերֆոսֆատ		750		750	
Կալիումի քլորիդ		250		250	
Կարբամիդ	600		600		
Հայկական 7 սորտերի պոմիդորի սածիլ	121560		121560		
Կծու և քաղցր տաքդեղի 5 սորտերի սածիլ	13800		13800		
Բադրիջանի սածիլ	12400		12400		
Դոմի սերմ «Բերքանուշ»	2,4		1,0		1,4
Լոբու սերմ «Վոլյունկա թուփ»	7,2		7,2		
Ձմերուկի սերմ «Միլիտոպոլսկ»	1,2		1,2		
Սեխի սերմ «Գովական»	0,36		0,36		
Սեխի սերմ «Անուշ»	0,36				0,36
Վարունգի սերմ «Գայանե»	0,36				0,36
Վարունգի սերմ «Հայարփի» «Մանե»	0,72		0,72		
Գագարի սերմ	1,0		0,400		0,600
Բանջարեղենի սերմեր 2019թ ցանքի համար քաղրջանի «Հոկտեմբերյանի 3»	0,200				0,200
Պոմիդորի սերմ «Մուսա լեռ», «Հայկական հրաշք»	0,500				0,500
Լոբու սերմ «Վոլյունկա թուփ» և «Մասիսի բանջարանային»	5,0				5,0
Աշնանացան գարու սերմացու	350,0		350,0		
Խնձորենու 8 սորտի տնկիներ	132,0		132,0		

Տանձենու 4 սորտի տնկիներ	70,4		70,4		
Սերկևիլենի	20,0		20,0		
Կեռասենի	60,0		60,0		
	<b>Հերբիցիդներ</b>				
Գեզագարդ	12		12		
Ռաունդասպ	29		29		-
	<b>Սնկասպաններ</b>				
Դիմիկոլ	5		5		-
Բորդոյան խարնուրդ	3		3		
Պրեվիկուր	13,5		13,5		-
Ռեդոմիլ գոլդ	4		4		-
	<b>Միջատասպաններ</b>				
Դեմոն	1		1		-
Պոռկլեյմ	8		8		-
Ծառի բնի պաշտպանիչներ		8 հատ	4 հատ		4 հատ
Սաճիլի խոռոչիկներ		64 հատ	64 հատ		
Խոռոչիկի տակդիրներ		32հատ			32 հատ
Բենզինային սրսկիչ		1 հատ			1 հատ
Մեխանիկական սրսկիչ	1 հատ				1 հատ



## 2018թ. շահագործված տեխնիկայի ցանկը

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չափանիշ միավոր	Սկզբնական քանակ
1	Տեսախցիկ հսկողական Dahua DH HAC-HDW1200RP		32
2	Հսկողական տեսախցիկ Dahua DH HAC HFW1200SP		8
3	Տեսախցիկ հսկողական Dahua DH HAC-HFW1200DP-3,6mm		4
4	Տեսախցիկ հսկողական Dahua DH HAC-HDW1200EMP-A-0360B		8
5	Տեսախցիկ արտաքին DH-HAC-HFW2241EP-A-0360B		4
6	Տեսաձայնագրիչ Dahua DH-XVR5108HS		1
7	Տեսաձայնագրիչ Dahua DHI-XVR5116HS-S2		1
8	Չայնարկիչ տեսախցիկով		1
9	Պրոյեկտոր Benq MS524AE		1
10	ASUS H110, CPU_Intel core i5-7400, RAM-DDR 8GB, HDD		1
11	ASUS Z170 PROGaming CPU-Intel Corei5-7400, video-g		1
12	Ցանցային բաժանարար TP Link 8 port		30
13	Մուլցման աղբյուր UPS Mercury Elite PRO 650		3
14	Տպիչ i-SENSYS LBP 6030		2
15	Տպիչ Canon MF3010		1
16	Տպիչ Canon MF232 w		1
17	Տպիչ hp Color Laserjet PRO M254 nw		1
18	Տպիչ Printer HP M12A		1
19	Կոշտ սկավառակ Seagate SATA 6Gb/s 3.5-Inch 4TB Desk		3
20	Արտաքին կոշտ սկավառակ 2TB ծավալով Seagate		1
21	Արտաքին կոշտ սկավառակ Seagate 2 տեռաբայթ ծավալով		1
22	Կոշտ սկավառակ Seagate 4TB		1
23	Կոշտ սկավառակ 500ԳԲ ծավալով		3
24	Քարթրիջ GG CBA-435/CB436A/85A		6
25	Քարթրիջ HP LJ Color CP1215 CB540-543A		4

26	Գունավոր քարթրիջ Canon MF 8030-ի համար CB 540		4
27	HP քարթրիջ կարմիր		4
28	HP քարթրիջ սև		4
29	HP քարթրիջ դեղին		4
30	HP քարթրիջ կապույտ		4
31	Համակարգիչ Dual Core, 2 GB RAM, 160GB HDD		4
32	Մոնիտոր 15 դույմ		4
33	Համակարգիչ (կոմպլեկտ) - Intel CPU G4400, RAM 4GB, DDR4, DVDRW ASUS, 380W, Display HD Graphics 510 2 GB, Monitor LG 20" MP38HB, Key & Mouse A4TECH KR-85		4
34	Համակարգիչ (կոմպլեկտ) - Intel CPU core i5 7400, RAM 16GB, DDR4, DVDRW ASUS, 380W, Display Nvidia GeForce 1030 4 GB, Monitor LG 20" MP38HB, Key & Mouse A4TECH KR-85		1
35	Սկաներ Canon Lide 120		1
36	Համակարգիչ Motherboard - Asus H110, CPU – Intel Core i5-7400, RAM – DDR4 8 GB, SSD 120GB, HDD -1 TB WD, Case – Invader + 650W Power, KB+Mouse+Speacker Genius, DVD –RW LG, Monitor - LG 24" LED, UPS 650W		1
37	Համակարգիչ Motherboard - Asus Z170 PRO Gaming, CPU – Intel Core i5-7400, Video – GeForce GTX 1050Ti 4Gb GDDR5, RAM – DDR4 16 GB, SSD 120GB, HDD -1 TB WD, Case – Invader + 650W Power, KB+Mouse+Speacker Genius, DVD –RW LG, Monitor - LG 24" LED		1
38	Համակարգիչ Motherboard - Asus H110, CPU – Intel Core i5-7400, RAM – DDR4 8 GB, SSD 240GB, HDD -1 TB WD, Case – Invader + 650W Power, KB+Mouse+Speacker Genius, DVD –RW LG, Monitor - LG 24" LED, UPS 650W		1
39	Նոութբուք Lenovo Ideapad 330IKB, i5 8250u, 8 gb DdR4, 1Tb hdd, Intel Hd 620U 2 gb, Dwd +-RW 17"		1
40	Անխափան սնուցման սարքի մարտկոց		1

**2018թ. նախահաշվով նախատեսված տնտեսական, գրենական, վարչական սարքավորումների, տրանսպորտային նյութերի, գույքի ձեռք բերման և Ստեփանակերտ Շուշի Ստեփանակերտ ուղևորափոխադրման համար նախատեսված գումարները ծախսվել են.**

1	Գրասենյակային նյութեր	2,5 մլն.դրամ
2	Տրանսպորտային նյութեր	5,5 մլն.դրամ
3	Կենցաղային ապրանքներ	3,354 մլն.դրամ
4	Ուղևորափոխադրում Ստ.-Շուշի-Ստ.	55,5մլն.դրամ,/նախ.69 մլն.դր/
5	Վարչական սարքավորումներ/համակարգչային/	5 մլն.դրամ
6	Այլ մեք.սարք., ուսումնագ, գույք	5 մլն.դրամ

### **Հավելված 1.3**

**Կազմակերպված մրցույթների և պարզեցված ընթացակարգերի ցանկը համալսարանի համար համակարգչային տեխնիկայի, տնտեսական և գրասենյակային ապրանքների, կենցաղային տեխնիկայի, լաբորատոր սարքավորումների, գյուղմթերքների և սննդամթերքի ձեռք բերման համար**

- «ՇՏՀ-ՇՀԾՁԲ-18/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի ընթացակարգ <<Շուշիի տեխնոլոգիական համալսարան>> հիմնադրամի կարիքների համար ուղևորափոխադրումների ծառայության ձեռք բերման նպատակով:
- «ՇՏՀ-ՊԸԱՊՁԲ-18/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգ <<Գյուղ. տեխնիկայի>> ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի ընթացակարգ, բենզինի ձեռք բերման նպատակով:
- «ՇՏՀ-ԲԸԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգ, էգ մատղաշի ձեռք բերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԾՁԲ-18/2» ծածկագրով գնման ընթացակարգ, ուղևորափոխադրումների ծառայության ձեռք բերման նպատակով:
- «ՇՏՀ-ՊԸԱՊՁԲ-18/2» ծածկագրով գնման ընթացակարգ, GPS սարքավորման ձեռք բերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրի ընթացակարգ, սննդամթերքի և ըմպելիքների ձեռք բերման նպատակով:
- «ՇՏՀ-ԲԸԱՊՁԲ-18/2» ծածկագրով գնման ընթացակարգ էգ մատղաշի ձեռք բերման նպատակով:

- «ՇՏՀ-ՇՀԾՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգ, ուղևորափոխադրումների ծառայության ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՊԸԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգ, գյուղ. տեխնիկայի ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգ սննդամթերքի և ըմպելիքների ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԾՁԲ-18/4» ծածկագրով գնման ընթացակարգ ուղևորափոխադրումների ծառայության ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՊԸԱՊՁԲ-18/4» ծածկագրով պարզեցված ընթացակարգ GPS սարքավորման ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնման ընթացակարգ տեխնիկա և օժանդակ սարքավորումների ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով գնման ընթացակարգ, սննդամթերքի և ըմպելիքների ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԾՁԲ-18/5» ծածկագրով գնման ընթացակարգ, ուղևորափոխադրումների ծառայության ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՊԸԱՊՁԲ-18/5» ծածկագրով գնման ընթացակարգ, սկավառակային փոցխ ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՊԸԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնման ընթացակարգ, գյուղաընտեսական տեխնիկայի հավաքածուի ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԾՁԲ-18/6» ծածկագրով գնման ընթացակարգ, ուղևորափոխադրումների ծառայության ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով գնման ընթացակարգ, սննդամթերքի և ըմպելիքների ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԾՁԲ-18/6» ծածկագրով գնման ընթացակարգ ուղևորափոխադրումների ծառայության ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՊԸԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնման ընթացակարգ, ավտոմեքենա ԳԱՁ 2506 կամ համարժեքը ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնման ընթացակարգ, համակարգչային և պատճենահանման սարքավորումների, օժանդակ նյութերի, քարտրիջների և տոներների ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԾՁԲ-18/7» ծածկագրով գնման ընթացակարգ, բեռնափոխադրումների ծառայության ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԾՁԲ-18/8» ծածկագրով գնման ընթացակարգ, բեռնափոխադրումների ծառայության ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով գնման ընթացակարգ, տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով:

- «ՇՏՀ-ՊԸԱՊՁԲ-18/8» ծածկագրով գնման ընթացակարգ, չորանոց ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՊԸԱՊՁԲ-18/9» ծածկագրով գնման ընթացակարգ, ինքնաթափ ավտոմեքենա ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/9» ծածկագրով գնման ընթացակարգ, սննդամթերքի և ըմպելիքների ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՊԸԱՊՁԲ-18/10» ծածկագրով գնման ընթացակարգ, տախետմետր ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/10» ծածկագրով գնման ընթացակարգ, սննդամթերքի և ըմպելիքների ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՊԸԱՊՁԲ-18/11» ծածկագրով գնման ընթացակարգ, ինքնաթափ ավտոմեքենայի ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով գնման ընթացակարգ, սեղմված բնական գազի ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՊԸԱՊՁԲ-18/12» ծածկագրով գնման ընթացակարգ, տախետմետր, քարթրիջների ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/12» ծածկագրով գնման ընթացակարգ, տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՊԸԱՊՁԲ-18/13» ծածկագրով գնման ընթացակարգ, բեռնատար ավտոմեքենա Ֆորդ տրանզիտ ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/13» ծածկագրով գնման ընթացակարգ, տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՊԸԱՊՁԲ-18/14» ծածկագրով գնման ընթացակարգ, բեռնատար ավտոմեքենա ֆորդ տրանզիտ ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/14» ծածկագրով գնման ընթացակարգ, համակարգչային և պատճենահանման սարքավորումների, օժանդակ նյութերի, քարտրիջների և տոններների ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնման ընթացակարգ, տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՊԸԱՊՁԲ-18/15» ծածկագրով գնման ընթացակարգ, մետաղապլաստե պատուհանների ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՊԸԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնման ընթացակարգ, կաթիլային համակարգ ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/16» ծածկագրով գնման ընթացակարգ, համակարգչային և պատճենահանման սարքավորումների, օժանդակ նյութերի, քարտրիջների և տոններների ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/17» ծածկագրով գնման ընթացակարգ, տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով:

- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/18» ծածկագրով գնման ընթացակարգ, դիզեյային վառելիքի ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/19» ծածկագրով գնման ընթացակարգ, բենզինի ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/20» ծածկագրով գնման ընթացակարգ, համակարգչային և պատճենահանման սարքավորումների, օժանդակ նյութերի, քարտրիջների և տոններների ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնման ընթացակարգ, սեղմված բնական գազի ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/22» ծածկագրով գնման ընթացակարգ, բենզինի ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/23» ծածկագրով գնման ընթացակարգ, էլեկտրոտեխնիկայի ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/24» ծածկագրով գնման ընթացակարգ, էլեկտրոտեխնիկայի ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/25» ծածկագրով գնման ընթացակարգ, սննդամթերքի և ըմպելիքների ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/26» ծածկագրով գնման ընթացակարգ, շինանյութերի ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/27» ծածկագրով գնման ընթացակարգ, տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/28» ծածկագրով գնման ընթացակարգ, սննդամթերքի և ըմպելիքների ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/29» ծածկագրով գնման ընթացակարգ, շինանյութի ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/30» ծածկագրով գնման ընթացակարգ, շինանյութ ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/31» ծածկագրով գնման ընթացակարգ, տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/32» ծածկագրով գնման ընթացակարգ, սառնարանների ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/33» ծածկագրով գնման ընթացակարգ, սառնարանների ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/34» ծածկագրով գնման ընթացակարգ, համակարգչային և պատճենահանման սարքավորումների, օժանդակ նյութերի, քարտրիջների և տոններների ձեռքբերման նպատակով:

- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/35» ծածկագրով գնման ընթացակարգ, համակարգչային և պատճենահանման սարքավորումների, օժանդակ նյութերի, քարտրիջների և տոններների ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/36» ծածկագրով գնման ընթացակարգ, սեղմված բնական գազի ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/37» ծածկագրով գնման ընթացակարգ, բենզինի ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/38» ծածկագրով գնման ընթացակարգ, էլեկտրոտեխնիկայի ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/39» ծածկագրով գնման ընթացակարգ, սառնարանի ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/40» ծածկագրով գնման ընթացակարգ, սեղմված բնական գազի ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/41» ծածկագրով գնման ընթացակարգ, էլեկտրոտեխնիկայի ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/42» ծածկագրով գնման ընթացակարգ, համակարգչային և պատճենահանման սարքավորումների, օժանդակ նյութերի, քարտրիջների և տոններների ձեռքբերման նպատակով:
- «ՇՏՀ-ՇՀԱՊՁԲ-18/43» ծածկագրով գնման ընթացակարգ, սեղմված բնական գազի ձեռքբերման նպատակով:



Վ. Բոլմաջյան